ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/161
26 հուլիս 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Լոռու մարզի Բազում համայնքի ղեկավարի թիվ 53-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

„ 18 „ 07 2017 թ. N 53 Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՋԵՄՄԱ ՀԱԿՈԲԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00301 ՀԱ 06-023-0234-0050 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Ջեմմա Մելքոնյանի համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով գնելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում գյուղական համայնքի համայնքային սեփականություն ճանաչված, Ջեմմա Մելքոնյանի կողմից ինքնակամ կառուցված 9-րդ փողոցի թիվ 18 փոստային հասցեով ավտոտնակը և զբաղեցրած հողամասը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Բազում համայնքի համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված՝ /անշարժ գույքի գրանցման թիվ 11042015-06-0028 վկայական/ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, Ջեմմա Մելքոնյանի կողմից ՀՀ Լոռու մարզի Բազում գյուղի 9-րդ փողոցի թիվ 18 փոստային հասցեով համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0234-0050 ծածկագրով 0.00301 հա, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, հողամասը կադաստրային արժեքով՝ 6682.2 /վեց հազար վեցհարյուր ութսուն երկու/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 222 ՀՀ դրամով և արտաքին չափերով ինքնակամ կառուցված 22.88 քմ մակերեսով ավտոտնակը 12584 /տասնքերկու հազար հինգհարյուր ութսուն չորս/ ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 550 ՀՀ դրամով գնման նախատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարել Ջեմմա Մելքոնյանին:
2. Պարտավորեցնել Ջեմմա Մելքոնյանին 30-օրյա ժամկետում համայնքի ֆոնդային հաշվին վճարել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի օտարման արժեքը և կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ